№ 124 Յուլիսի 28 (Օգոստոսի 9) 1879 Յուլիսի 28 (Օգոստոսի 9) № 124

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի

Ստորագրվում են միմիայն խմբագրատան մէջ.

[illegible]
Тифлисъ. Редакція „Мшакъ"

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է ամեն օր առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւններ ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարվում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յարգեցէք ձեզ և ձեզ կը յարգեն.—Ներքին տեսութիւն. [illegible]—Արտաքին տեսութիւն. [illegible]—Յայտարարութիւններ.

ՅԱՐԳԵՑԷՔ ՁԵԶ ԵՒ ՁԵԶ ԿԸ ՅԱՐԳԵՆ

Մենք կուզենայինք դարձեալ մի քանի խօսք աւելացնել «Մշակի» № 121 մէջ տպված առաջնորդող յօդուածին.

Մեր թիֆլիսցի վաճառականների գործակատարները գանգատվում են թէ, նրանց տէրերը բաւ չեն վարվում նրանց հետ, ծեծում են նրանց վրա, անարգում են նրանց, տարիներով պահում են նրանց նիւթական և բարոյական ստրկութեան մէջ.

Մենք հաւատում ենք թէ մեր գործակատարների գանգատները արդարացի են.... Բայց ո՞վ է մեղաւոր դրա մէջ։

Փոխել մեր վաճառականների բնաւորութիւնը անհնարին է։ Նրանք մեծացել, կրթվել են կամայական, բռնաւոր ոգու մէջ, անհնարին է փոխել նրանց մէջ արմատացած հայրապետական ոգին։ Եթէ մեր գործակատարները կամենում են որ իրանց տէրերը իրանց հետ աւելի լաւ վարվեն, նրանք պէտք է ստիպեն վաճառականներին յարգել իրանց անձը։ Բայց ինչպէս։

Գործակատարները պէտք է նախ աշխատեն ուղղել իրանց կեանքի եղանակը, ուղղել իրանց բարքը ու վարքը, պէտք է աշխատեն այդ կողմից անյանդիմանելի լինել. երկրորդ պէտք է աշխատեն մտաւորապէս զարգանալ, զարգացնել իրանց մէջ անձնաւորութեան, մարդկային ինքնաճանաչութեան զգացմունքը. վերջապէս պէտք է աշխատեն ցոյց տալ որ հարկաւոր ժամանակ ունեն իրանց մէջ ընդհանուր նիւթական միջոցներ, ունեն մի տեսակ սնդուկ, կամ փոխադարձ օգնութեան գանձարան, որից իւրաքանչիւր գործակատար կարող է օգնութիւն ստանալ, երբ նրան սպառնում է տիրոջ կամայականութիւնը.

Ինչպէս վաճառականը կամայական կերպով դուրս է անում գործակատարին իր ծառայութիւնից, զրկում է նրան և նրա ընտանիքը անմիջական կտոր հացից։ Գործակատարը պէտք է պատրաստ լինի, մինչև որ իր համար ուրիշ պաշտօն չը գտնի. Այս աշխատ նա դիմում է գործակատարների ընկերութեան փոխադարձ օգնութեան գանձարանին, էժան տոկոսով մի չնչին փոխ է առնում այդ գանձարանից և ազատվում հնարք է սատանում ապրել մինչև որ գտնելու կը գտնի իր համար մի պաշտօն, մի պաշտօն.

Բացի սորանից գործակատարների ընկերութիւնը պէտք է աշխատի այնպիսի յարգանք և հեղինակութիւն ստանալ վաճառականների մէջ, որ վաճառականները ստիպված լինեն դիմել այդ ընկերութեան գործակատար հայթայթելու և նրա աշխատասիրութեան ու բարքի ու վարքի մասին վկայութիւն ստանալու համար։

Այն ժամանակ, երբ գործակատարների մէջ կը հաստատվի փոխադարձ համերաշխութիւն, վաճառականը էլ չի կարողանայ կամայական կերպով վարվել իր մի ծառայող գործակատարի հետ, որովհետև նրան իր բարոյական հեղինակութեան, եթէ ոչ պաշտպանութեան տակ առած է, կը պաշտպանի գործակատարների ընկերութիւնը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Վլադիկաւկազից մինչև Թիֆլիս

[illegible]

Եթէ կամենում էք որ ձեզ յարգեն, ինքներդ յարգեցէք և յարգել տուէք ձեր անձը, — աշխ, ձեր կարծիքով, բարոյական [illegible] նշանաւորներ, որ երբեք չը պէտք է մոռանան մեր երիտասարդ գործակատարները։

Թող չը մոռանան մեր գործակատարները որ հին սերունդը կանցնի, իսկ ժամանակով իրանց կը վիճակվի լինել մեր առևտրական դասակարգի ներկայացուցիչներ, ուրեմն թող աշխատեն բարոյապէս աւելի մաքուր, աւելի ազնիւ լինել, քան թէ մեր այժմեան վաճառականները, բացի սորանից թող աշխատեն բարոյական և նիւթական փոխադարձ համերաշխութեամբ միմեանց օգնել և պաշտպանել, թող աշխատեն մտաւորապէս զարգանալ, առաջ տանեն, քանի որ երիտասարդ են, առանց վաճառականին հարկաւոր հմտութիւնները։ Դորա համար թող հիմնեն իրանց ընկերութեան մէջ մի [illegible] գրադարան, կարդան գրքեր և լրագիրներ, նպաստեն իրանց ընկերութեան մէջ հասարակական [illegible] իրագործման և այլն։

Բայց թող չը մոռանան և այն, որ [illegible] մարդ, ո՛ր դասակարգին կամ պաշտօնեաներին և պատկանի նա, կատարեալ մարդ լինելու համար պէտք է սիրի և իր ազգը և ոչ թէ լինի մի տեսակ անարդ ու մի ազգութեան չը պատկանող էակ, միայն իր գրպանը լցնող և իր փորը հատուցանող, մարդկութեան ու մի բնաւորութիւն, ու մի ցեղին, ու մի ազգութեան չը պատկանող անբան կենդանի, անզգայ անասուն։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ [illegible]

Թիֆլիս, 19 յունիսի

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

[illegible]

[illegible] «Русская Правда» և «Молва» [illegible]

Մեզ հաղորդում են ՆՈՐ-ԲԱՅԱԶԵԴԻՑ, որ [illegible]

«Մշակի» № 123-ի [illegible] «Մշակի» ԹԵՐԹՕՆԻ [illegible]

[illegible]

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԻԱ

«Nord» լրագիրը, խօսելով Թիւրքիոյ [illegible] 31 [illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

[illegible]

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

[illegible]